ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ
ՌՈՒԲԵՆ ԿԱՌԼԵՆԻ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

29 մարտի, 2021

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ

Նարինե Հարությունի Կարախանյանի «Արդի հայ կենսագրական վեպը. 1990-2015 թթ.» թեմայով թեկնածուական ատենախոսության վերաբերյալ

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Վ. Պարտիզունու անվան հայ նոր եւ նորագույն գրականության եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 29.03.2021 թ. թիվ 6 նիստին մասնակցում էին ամբիոնի վարիչ, բ.գ.դ., պրոֆ. Սուրեն Դանիելյանը, պրոֆ. Մարտին Գիլավյանը, բ.գ.թ., դոցենտներ Նաիրա Խաչատրյանը, Քնարիկ Աբրահամյանը, Լուսինե Գալստյանը, Արմենուհի Մուրադյանը, մ.գ.թ., դոցենտ Նաիրա Տողանյանը:

ԼՍԵՑԻՆ՝ Նարինե Հարությունի Կարախանյանի «Արդի հայ կենսագրական վեպը. 1990-2015 թթ.» թեմայով թեկնածուական ատենախոսությունը ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան Գրականության Ինստիտուտում գործող ԲՈԿ-ի գրականագիտության գծով 003 մասնագիտական խորհրդում պաշտպանության երաշխավորելու հարցը՝ Ժ.01.02 «*Նորագույն շրջանի հայ գրականություն*» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ ամբիոնի վարիչ, բ.գ.դ., պրոֆ. Ս. Դանիելյանը, պրոֆ. Մ. Գիլավյանը, դոցենտներ Ն. Խաչատրյանը, Ք. Աբրահամյանը, Ա. Մուրադյանը, Լ. Գալստյանը:

Նարինե Հարությունի Կարախանյանի «Արդի հայ կենսագրական վեպը. 1990-2015 թթ.» թեկնածուական ատենախոսության մեջ առաջին անգամ նշված ժամանակահատվածի կտրվածքով (1990-2015) տեսականորեն փորձ է կատարվել ճշգրտել կենսագրական վեպի թեմատիկ, ժանրային, գաղափարագեղարվեստական դրսեւորումները:

Աշխատության հեղինակը հնարավորինս ուսումնասիրել է կենսագրական վեպի տեսությունը՝ որպես վեպի առանձին ենթաժանր, փորձել ներկայացնել արդի որոշ հեղինակ-կենսագիրների նշանավոր եւ հայտնի մարդկանց գեղարվեստական կերպավորման առանձնահատկություններ, կարեւորել նշված հեղինակների երկերում վավերագրականի եւ գեղարվեստականի հարաբերակցությունը:

Սույն աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից:

Ատենախոսության առաջին՝ «Պատմության եւ տեսության հարցեր» գլխում Ն. Կարախանյանը ներկայացրել է կենսագրական վեպի տեսությունը, ակունքները, անդրադարձել կենսագիր հեղինակների, գրականագետների արտահայտած կարծիքներին՝ պահելով նաեւ Սերգեյ Սարինյանի՝ երկու անգամ լույս տեսած ուսումնասիրության ոճը՝ «Վեպի պատմության եւ տեսության հարցեր. հայ վեպի պատմական ուղին»:

Երկրորդ՝ «Գեղարվեստականի եւ վավերագրականի համադրության տիրույթներում» գլխում հիմնականում առանձնացրել է իր տեսողությամբ բարձրարժեք գեղարվեստական կենսագրավեպերը՝ մեկնելով դրանց գեղարվեստական առանձնահատկությունները, տվյալ ժամանակաշրջանի ազգային, հասարակական, գրական կյանքի էական կողմերը:

Երրորդ գլուխը («Պրոտագոնիստի դժվարին ճակատագիրն՝ իբրեւ ստեղծագործական ազդակ») վերաբերում է այն կենսագրական երկերին, որոնց ստեղծագործական խթան է դարձել գլխավոր հերոսի դժվարին ճակատագիրը: Այս խորագրի հարցում, սակայն, ունենք վերապահություն:

Ներածության մեջ հիմնականում ճիշտ են սահմանված աշխատանքի նպատակն ու խնդիրները: Սակայն կուզենայինք բերել մեկ նկատառում, այն, որ «արդի արեւելահայ եւ արեւմտահայ-սփյուռքահայ (վիճելի ձեւակերպում է) կենսագրական վեպերը դիտարկել ենք ամբողջությամբ» (էջ 4) մտքի տակ հեղինակը քննում է ընդամենը Սարգիս Վահագնի «Արշիլ Կորքի» վեպը: Պետք է նշել, որ կան մի շարք տարբեր հեղինակների կենսագրավեպեր, որոնց ոչ միայն անդրադարձ չի կատարվել, այլեւ անուններն անգամ չեն հիշատակվել, ինչպես օրինակ ամերիկահայ գրող Լեւոն Սողոմոնյանի (գրական կեղծանունով՝ Նովել) «Փախուստ դժոխքից»՝ դեռեւս

գրականագիտական ուսումնասիրության չենթարկված կենսագրական վեպը (2005), ուր հերոս Վաղարշակ Սաֆրազբեկյանի կողքին ներկայացվել են Գարեգին Նժդեհը, Ակսել Բակունցը, Սաֆրազբեկյանների տոհմի նշանավոր այլ անձնավորություններ, մինչդեռ 47-րդ էջում ատենախոսության հեղինակը հաստատում է. «Ցավոք, 1930-ական թթ. հայ մտավորականների ապրած դժվարին կյանքն արծարծող կենսագրավեպեր չունենք»: «Փախուստ դժոխքից» վեպը կարելի էր ներկայացնել Բակուրի «Շուշեցու հիշատակարանը» պատմակենսագրական վեպին զուգահեռ:

Ատենախոսության տեսական ու մեթոդական հիմքերը պարզելիս հեղինակը բերում է «գեղարվեստական երկերը ուսումնասիրվել եւ խմբագրվել են ըստ ճանաչողական, մեկնողական, տեսական ընդհանրացման հայեցակարգերի» անհաջող ձեւակերպումը (սեղմագիր, էջ 5): Հատկապես անհասկանալի է թվում «խմբագրվել են» արտահայտությունը:

Ներածության մեջ Հովհ. Թումանյանից բնաբանը, մեղմ ասած, անտեղի է եւ խիստ գեղարվեստական գիտական նման շարադրանքի համար:

Նկատենք, որ հետազոտողը հավակնոտ է մոտենում իր կատարած աշխատանքին: Նա գտնում է, թե «Ատենախոսությունն առաջին փորձն է համահավաք ներկայացնելու արդի հայ կենսագրական վեպը որոշակի ժամանակահատվածի կտրվածքով՝ 1990-2015 թթ.: Մեր ատենախոսությունից առաջ հրապարակի վրա չի եղել հայ կենսագրական վեպին նվիրված ամբողջական, համակարգված, համակարգային ուսումնասիրություն, ինչին էլ միտված է մեր աշխատանքը» (էջ 8): Թվում է՝ այս աշխատանքով նյութը համակարգվեց եւ ամբողջացավ: Եղա՞վ:

Մեր կարծիքով, ատենախոսության վերնագրի մեջ պիտի արտացոլվեին այն սկզբունքները, որոնք հավակնոտության չէի հասցնի, ասենք այսպես՝ «Արդի կենսագրական վեպի **որոշ** դիտարկումներ. 1990-2015թթ.»: Այս առումով եւս մեկ նկատառում. ինչո՞ւ վերնագրում քննությունն սկսել 1990-ից (համաձայն չենք Անկախության Հռչակագրով պայմանավորված բաժանման հետ (էջ 4) եւ ոչ 1991-ից, եւ ինչո՞ւ ավարտել 2015-ով: Կարելի էր թեմայի մեջ սրբագրում մտցնել ավարտման թվի հետ կապված՝ «մինչեւ մեր օրերը» նշումով: Ի դեպ, նման անախրոնիկ մոտեցում կա Վահրամ Դանիելյանի «Արդի հայ վեպը (1991-2008)» ատենախոսության պարագային:

Վերջին ճշմարտության եւ դատավճռի, սեւ ու սպիտակի գունավորումով են հնչում Հայկազ Հակոբջանյանի, Վազգեն Առաքելյանի, Ալեքսանդր Թոփչյանի վեպերի մասին գրականագետների մի ամբողջ սերնդի (Ժ. Քալանթարեան, Օ. Հովհաննիսյան, Լ. Մութաֆյան, Հ. Սրապյան, Շ. Գրիգորյան եւ ուրիշներ, էջ 7) արտահայտած վերաբերմունքի շուրջ ատենախոսի գնահատականները՝ առանց գիտական մեկնության:

Մեր կարծիքով, նպատակահարմար չի թվում ատենախոսության գլուխները տրոհել մանր ենթագլուխների, ինչի հետեւանքով երկրորդ գլուխն ունի 5, երրորդը 6 ենթաբաժանում:

Գլուխների բաժանման մեջ եւս կան անհամամասնություններ: Օրինակ՝ երկրորդում եւ երրորդում տրվում են Պարույր Սեւակի եւ Ռուբեն Սեւակի կերպարները քննող գործեր՝ մի տեսակ բերելով կրկնության վտանգ: Ավելին, մեր կարծիքով, հեղինակային մոտեցումների համեմատությունների պարագայում ավելի ակնհայտ կդառնային պատմականի եւ գեղարվեստականի համամասնություններն ու վեպերի արժեքային տարբերությունները, ինչը ատենախոսն արել է Վահան Տերյանի կերպարի առնչությամբ (երրորդ գլխի երկրորդ՝ «Վահան Տերյանի կերպարը կենսագրական վեպերում» ենթագլուխը):

Շատ համառոտ, հակիրճ, անգամ կցկտուր է ատենախոսության երրորդ գլխի առաջին ենթագլուխը՝ «Հայկազ Հակոբջանյանի կենսագրական վեպերը» (էջ 124-127): Երեք վեպ՝ ընդամենը երեք էջում:

Անդրանիկ Ծառուկյանի «Սերը եղեռնի մեջ» 1987-ին տպագրված վեպը դուրս է ատենախոսության շրջանակներից, սակայն հեղինակը 7–8 էջ անդրադարձ է կատարել, մինչդեռ Հայկազ Հակոբջանյանի՝ Դանիել Վարուժանին նվիրված «Առկայծ ճրագ» երկի մասին, որը հենց տեղավորվում է թեմայի մեջ, խոսում է առավելագույնը մեկ էջի սահմաններում: Անդրանիկ Ծառուկյանի հետ կապված կարելի էր քննության նյութ դարձնել Զավեն Խանճյանի «»Հալեպ, առաջին կայարան / մանկություն ունեցո՛ղ տղու մը հուշերը» երկը (2012): Սրա կողքին՝ «Այս տունը իմս է թե քուկդ» ինքնակենսագրական հուշագրությունը:

Գրականագիտական մեթոդների կիրառության առիթով տարակուսելի է Ալ. Թոփչյանի վեպը մեկնել հիմնականում հոգեվերլուծական հերմենեւտիկայի մեթոդով

(էջ 11): Ուր մնաց պատմափաստագրական մեթոդը, որով հատկապես առանձնանում է «Եվ անգամ մահից հետո» ստվար վեպը: Նշենք նաեւ «գոյության փիլիսոփայության» (երեւի աչքի առաջ ունեցել է էկզիստենցիալ մտածողությունը) մեթոդի ճանաչումը «Վերջին արեւագալը» վեպում (նույն տեղում), երբ այնտեղ պատմահամադրական համայնապատկերի գեղարվեստական մարմնավորման փորձն է՝ իրապաշտական եւ վիպապաշտական կառույցների զուգակցումով, յուրատեսակ նորարար քայլ նորագույն ազատ կառուցվածքի պատմավեպերի հարացույցում: Պերճ Զեյթունցյանի «Վերջին արեւագալը» վեպը առաջին անգամ լույս է տեսել ոչ թե 1990-ին (էջ 52) կամ 1991-ին (էջ 178), այլ՝ 1989-ին, ինչպես ներածական հատվածում հաստատում է նաեւ ատենախոսը (էջ 4), ինչը վիճարկելի է դարձնում վեպի՝ իբրեւ առանձին ենթագլուխ ընդգրկման անհրաժեշտությունը:

Ատենախոսությունը կշահեր, եթե Վազգեն Առաքելյանի «Շիրազ-Նամե» չափածո կենսագրական վեպը (էջ 146) զուգահեռվեր Գուրգեն Մահարու «Չարենց-Նամե» հուշագրությանը: Կամ Աննա Պետրոսյանի «Սերն աշխարհեն խռովել՝ կերթա» Նահապետ Քուչակին նվիրված վեպը ներկայացնելիս վատ չէր լինի, որ հիշատակվեր նաեւ Մարգար Դավթյանի «Հավերժական կտակ» պատմական կենսագրական վեպը՝ նվիրված Նաղաշ Հովնաթանին:

Արդի վեպի վերնագրերի ընտրության օրինաչափություններին մոտենալիս Ն. Կարախանյանը առանձնացնում է «վերնագիրը ժանրի ցուցիչ է» ձեւակերպումը եւ օրինակ բերում Աշոտ Ավետիսյանի «Մենավորի աստղը կամ Վ. Տերյանի կյանքը», որտեղ մենք «ժանրի ցուցիչ», այնուամենայնիվ, չենք տեսնում (սեղմագիր, էջ 13-14):

Եզրակացությունները հիմնականում բխում են ատենախոսության դրույթներից: Միայն ոչ այնքան գիտական է թվում երկրորդ կետը (էջ 173):

Ատենախոսության մեջ հաճախ ենք հանդիպում կրկնվող մտքերի, անհաջող ձեւակերպումների, ինչպես օրինակ՝ «Կենսագրական վեպն այսօր լայն տարածում ունի նաեւ կինոարվեստում...» (էջ 10), կան որոշ վրիպակներ (էջեր 4, 9, 56, 95, 107, 97, 123, 125): Շողիկ Սաֆյանի ազգանունը նշված է Սաֆարյան (էջ 105), էջ 67-ում բերված են Գեւորգ Գապառաճյանի «Ռուբեն Սեւակի վերջին օրերը» (1986) եւ Տիգրան Հաճյանի «Ռուբեն Սեւակի վերջին օրերը» (1985) երկերը: Երկրորդը գրականության մեջ չենք հանդիպել:

Հեղինակը կատարել է բազմակողմանի ուսումնասիրություն, օգտագործել է հարուստ գրականություն, նաեւ՝ համացանցային աղբյուրներ, սակայն ոչ միշտ են առցանց հրատարակությունները հավատ ներշնչում: Ցանկերում դրանք առանձին համարակալման մեջ են՝ 13: Այդ թվում է Վ. Բելինսկու 1836 թ. գրքի մատնանշումը, երբ կան 9 ակադեմիական հաստափոր հատորները: Կամ ինչո՞ւ ցանկում գրել Виссарион Б. (էջ 185), երբ աշխատանքում նշումը ճիշտ է՝ Белинский В. (էջ 22): Նույնը վերաբերում է բազմասերիանոց ֆիլմի մասին աղբյուրի հիշատակումին (էջ 184):

Գրականության ցանկում Կոստան Զարյանի «Անցորդը եւ իր ճամփան» գրքի տպագրության թիվը հիշատակված չէ (էջ 177): Գրականության ցանկում սխալ է Հակոբ Օշականի գրքի խորագիրը. պիտի լինի ոչ թե «Համայնապատկեր...», այլ «Համապատկեր արեւմտահայ գրականության», եւ հրատարակչության անունն էլ «Անթիլիաս» չէ (էջ 181): Տեխնիկական մեկ նկատառում եւս. շատ են ազատ տարածությունները սեղմագրում:

Նշված նկատառումները եւ վրիպակները առանձնապես չեն ստվերում կատարված ծավալուն աշխատանքը: Ուսումնասիրությունը հաջողված է, գրագետ, ինչը նման կարգի հետազոտություններում կարեւոր նախապայման է: Քննության առարկան մեր գրականագիտության մեջ արդեն իսկ թեմատիկ տարբաժանման ենթարկված եւ բազմիցս ուսումնասիրված կենսագրավեպերն են, որոնք հեղինակը փորձել է դիտել զուգահեռներում: Բնագրերը ենթարկված են նորովի վերլուծության:

Հիշատակելի է, որ ատենախոսության հեղինակի ուշադրության ոլորտից չեն վրիպել կենսագրական վեպի եւ պատմավեպի սերտ առնչությունները, ուստի ընդգծվել է, որ կենսագրական վեպում առանցքային խնդիրը կերպարի պատմահոգեբանական արծարծումն է: Հեղինակը նկատել է, որ որպես ժամանակակից վեպի ենթատեսակ, կենսագրական վեպը եւս զարգացող ժանր է, որին բնորոշ են ներժանրային թափանցումները: Այս համատեքստում էլ կատարել է որոշակի ինքնուրույն վերլուծություններ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Նարինե Հարությունի Կարախանյանի «Արդի հայ կենսագրական վեպը. 1990-2015 թթ.» թեմայով թեկնածուական ատենախոսության վրա կատարված է տեւական աշխատանք, ուսումնասիրված է բավական հարուստ աղբյուրագիտություն, հեղինակը քաջատեղյակ է նյութին: Հաստատում ենք այն

եզրակցությունը, որ հեղինակը կարողացել է նյութերը շահեկանորեն համադրել եւ մանրամասն քննության ենթարկել: Աշխատանքը համապատասխանում է ՀՀ ԿԳՄՄՆ ԲՈԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի պահանջներին եւ Ժ.01.02 «Նորագույն շրջանի հայ գրականություն» թվանիշին, ուստի երաշխավորվում է հրապարակային պաշտպանության:

ՍՈՒՐԵՆ ԴԱՎԹԻ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Վ. ՊԱՐՏԻԶՈՒՆՈՒ ԱՆՎԱՆ ՀԱՅ ՆՈՐ ԵՎ ՆՈՐԱԳՈՒՅՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԵՎ ՆՐԱ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ
ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Հաստատում եմ պրոֆ. Ս. Դ. Դանիելյանի ստորագրությունը:

ՄԱՐԻԱՄ ՄԿՐՏՉԻ ԻՍՊԻՐՅԱՆ

Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀՊՄՀ ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ